ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Մ. Մ. ԹԵԼՈՒՆՑ

Իրավական պետություն հասկացությունը նշանակում է պետության կամ հասարակության այնպիսի քաղաքական կազմակերպում, *որում դերիշխում է օրենքը՝ երբ թե՛ քաղաքացիները և թե՛ իրավաբանական անձինք, հավասարապես նաև ինքը՝ պետությունը, ղեկավարվում են միայն ու բացառապես օրենքով: Բնականաբար, իրավական պետություն նշանակում է նաև, որ օրենքները պետք է ընդունվեն՝ հաշվի առնելով հասարակության օբյեկտիվ պահանջները, ըստ հնարավորին ուղղված լինեն սոցիալական հավասարակշռության, ներդաշնակության հաստատմանը, սոցիալական արդարության ապահովմանը: Մեր կարծիքով «իրավական պետություն» հասկացության անխուսափելի ուղեկիցներն են նաև այնպիսի հասկացությունները, ինչպես՝ սոցիալական պետություն, ժողովրդավարական, ժողովրդաիշխանական պետություն, «իշխանությունների բաժանում» և այլն:*

Իրավական պետություն հասկացությունը որպես հակադրություն ամբողջատիրական վարչակարգերի, կառավարման բռնակալական, բացարձակ միապետական ձևերի, ձևավորվել է դարերի ընթացքում՝ անցնելով սոցիալական բազմաթիվ շարժումների, հեղափոխությունների բովով: Իրավական պետության գաղափարին՝ իր այս կամ այն դրսևորումներով, հանդիպում ենք հին աշխարհի մտածողների՝ Պլատոնի (մ.թ.ա. 428/27–347), Արիստոտելի (384–322) և մյուսների մոտ: Այն իր հետագա զարգացումն ու հստակեցումն է գտնում հատկապես XVII–XVIII դարերի առաջավոր մտածողների մոտ, իսկ հետագայում օրենսդրական ուժ ստանում մի շարք երկրների սահմանադրություններում[1]:

Արդեն հին աշխարհի մտածողները պետության ոչ իրավական լինելու, տվյալ հասարակարգում իշխանության օրենքի, *և ոչ թե* օրենքի իշխանության *փաստական տիրապետության պայմաններում անխուսափելի են*

---

1 *Այդ մասին մանրամասն տե՛ս* Վ. Ն. Խ ր ո պ ա ն յ ո ւ կ. *Պետության և իրավունքի տեսություն. Երևան, 1997, էջ 85-104:* Հ. Մ. Խ ա չ ա տ ր յ ա ն. *Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը. Երևան, 1997, էջ 39-42:* Конституции зарубежных государств, М., 1996, с. 144, 163, 165 *հտ.*:

համարել տվյալ պետության, քաղաքական հասարակության կործանումը[2]: Պատահական չէ, որ առաջադեմ շատ մտածողներ իրավական պետության գաղափարի, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների իրականացումը հիմնականում և ամենից առաջ կապել են բռնակալական, միապետական կառավարման ձևերի և քաղաքական ռեժիմների վերացման, պետական իշխանությունը՝ «իշխանությունների բաժանման» օրենսգիր, գատական և գործադիր իշխանությունների տարանջատման հիմքի վրա կառուցելը: Մոնտեսքյոն (1689–1755) իր «Օրենքների ոգու մասին» հանրահայտ գրքում, քննադատելով բռնակալական իշխանությունը, գրում էր, որ իշխանությունների միավորումը մեկ անձի ձեռքում նշանակում է ամեն ինչի կործանում[3]: Իսկական ազատությունը, ըստ Մոնտեսքյոյի, միայն այնտեղ կարող է գոյություն ունենալ, որտեղ գործում է օրենքը՝ միայն օրենքով թույլատրելիության սահմաններում, այլապես «ինքնակոչ», «անսահմանափակ» ազատությունը յուրաքանչյուր մարդու զրկում է ազատ լինելու հնարավորությունից, «քանզի ազատությունը իրավունք է անելու ամեն ինչ, ինչ թույլատրվում է օրենքով: Եթե քաղաքացին կարողանար անել այն, ինչ այդ օրենքներով արգելվում է , ապա նրա մոտ ազատություն չէր լինի (նա ազատ չէր լինի – Մ.Թ.), քանի որ նույն բանը կարող էին անել և մյուս քաղաքացիները»[4]: Որոշակի հավանություն արտահայտելով ժառանգական միապետության նկատմամբ, գտնելով, որ իր ժառանգական փոխանցման շնորհիվ այն բացառում է վեճերն ու քաղաքացիական կռիվները՝ «հզոր անհատների փառասիրական» ձգտումների հետևանքով և փաստորեն ավելի լավ է պաշտպանում քաղաքացիների ազատությունը, Հեգելը (1770–1831), որը, ինչպես հայտնի է, պրուսական միապետության ջատագովն էր, այնուամենայնիվ գտնում էր, որ միապետությունը կարող է այլասերվել բռնակալության: Ուստի թեպետ կարևոր է, որ միապետությունը անհատների մասնավոր շահերի դեմ ունենա բավարար չափով ուժ և պատշաճ իշխանություն, «սակայն մյուս կողմից, քաղաքացիների իրավունքները պետք է պաշտպանված լինեն օրենքներով»[5]: Հեգելի բնորոշմամբ, «իրավականը» պետության անբաժանելի հատկանիշն է, քանզի «պետությունը իրավական հարաբերություններով կապված մարդկանց հասարակություն է . . .»[6]:

Իրավական պետության, օրենքի, իրավունքի դերիշխանության պահանջները պարտադիր պահպանելու գաղափարը բավարար հստակությամբ արտահայտվել է նաև հայ պատմաիրավական հուշարձաններում:

---

2 Տե՛ս, П л а т о н. Сочинения в трех томах. Т. 3, ч. 2, М. 1972, с. 188-189. А р и с т о т е л ь. Сочинения. Т. 4, М., 1984, с. 481-484, 526 և հտ.:

3 Տե՛ս Ш. М о н т е с к ь е. Избранные произведения. М., 1955 с. 290-291.

4 Նույն տեղում, էջ 288-289:

5 Հ ե գ ե լ. Փիլիսոփայության ներածություն. Երևան, 1964 , էջ 98-99:

6 Նույն տեղում, էջ 94:

Արդեն V դարի հայ պատմիչների երկերում այն բավական որոշակի է: Անգամ այդ ժամանակներում իշխող շրջաններին պարզ է դառնում, որ օրենքի իշխանության բացակայությունը *ոչ միայն բազմաթիվ չարիքների պատճառ է, այլև լրջորեն վտանգում է իր իսկ՝ պետության գոյությունը, խախտում, քայքայում է հասարակության սոցիալական կառուցվածքը: Խոսելով նման իրավիճակի մասին, կապված Ներսես Մեծի (353–373) գործունեության հետ Փավստոս Բուզանդը գրում է. «Եվ բոլոր աշխարհին պատվիրում էր նա (Ներսես Մեծը – Մ.Թ.) ... նույն ինքն թագավորին, մեծամեծներին և առհասարակ նրանց, որոնք ուրիշի վրա իշխանություն ունեին, որ գութ ունենան իրենց ծառաների, ստորադրյալների և աշակերտների վրա, սիրել նրանց իբրև իրենց ընտանիներին, ապօրինի կերպով ու չափազանց հարկերով նրանց չնեղել, հիշեցնելով, որ նրանց համար էլ աստված կա երկնքում: Ծառաներին էլ պատվիրում էր հավատարիմ և հնազանդ լինել իրենց տերերին, որի համար էլ վարձ կստանան տերից»[7]: Մեկ այլ առիթով, պատմիչը, թեպետ և հանգես գալով տիրապետող դասակարգի գաղափարախոսության գիրքերից, նշում է, թե երբ Արշակ II-ի (350–368) հրովարտակով Մասիսի ստորոտում կառուցվում է Արշակավան քաղաքը, արքան հրաման է տալիս, որպեսզի երկրի բոլոր մասերից մարդիկ գան և կառուցեն այն, ապա դրանից օգտվում են նաև բոլոր հանցագործները , որոնց մեղքը Արշակը ներում էր . մի բան, որը խախտում է կարգը, օրենքը, որը ևս ընդունվում է խիստ բացասաբար. «Երբ թագավորից այս հրամանը դուրս եկավ՝ ապա այդ տեղում ժողովվեցին բոլոր գողերը, ավազակները, արյունապարտները, մարդասպանները, ստախոսները, խաբեբաները, վնասարարները, գրպանահատները, զրկողները, դատի մեջ ստողները, զրպարտողները, կողոպտողները, հափշտակողները, ժլատները: Շատ հանցանքներ էին գործում, և այնտեղ (Արշակավանում – Մ.Թ.) ապավինում: Շատ կանայք իրենց մարդկանց թողնում էին ու այնտեղ ընկնում. շատ տղամարդիկ իրենց կանանց թողնում էին և ուրիշների կանանց առնելով այնտեղ էին ընկնում. շատ ծառաներ իրենց տերերի գանձերը ճանկ ձգելով փախչում էին այնտեղ էին ընկնում. շատ ավանդառուներ իրենց մոտ պահեստի դրված ավանդները վերցնում այնտեղ էին ընկնում. ամբողջ աշխարհը գերփում, ավերում էին:*

Թեպետ և ամեն կողմից աղաղակ (բողոք, ընդվզում – Մ.Թ.) բարձրացավ՝ բայց դատ չկար, ոչ ոքի իրավունքը արքունիքից չէր պաշտպանվում: Այս պատճառով բոլոր մարդիկ վայ տալով հառաչում էին. բոլորի բերանում ընդհանուր խոսք էր դարձել և միշտ ասում էին թե «իրավունքը մեռավ. եթե նա գոյություն ունենար , բայց կորած լիներ՝ կփնտրեինք , մի տեղ կգտնեինք նրան »[8]:

---

7 *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն. Երևան, 1987 , էջ 122-123:*

8 *Նույն տեղում, էջ 169 (ընդգծումները մերն են –Մ.Թ.): Ուշագրավ է, որ Խորենացին նույնպես իր նշանավոր «Ողբում» երկրի ծանր կացության պատճառների շարքում*

Ինչպես տեսնում ենք, օրենքի, իրավունքի իշխանության անկումը լրջորեն անհանգստացնում էր նույնիսկ հոգևոր իշխանությանը, որը միաժամանակ խոշոր ֆեոդալ-հողատեր էր: Դա պատահական չէր, քանզի ֆեոդալական կամայականությունները, շահագործումը, անօրինականությունները այդ շրջանում այն աստիճան անցել էին չափը, որ արդեն հիմնականում կրոնական քողի տակ սկսել էին սոցիալական շարժումները՝ բորբորիտների, մծղնեականների, որոնք VI–XI դարերում վերածվեցին այնպիսի հզոր շարժումների, ինչպիսիք պավլիկյանների և թոնդրակյանների շարժումներն էին: Այդ, ինչպես և IX դարում ծավալված Բաբեկի հզոր շարժումները սասանեցին ոչ միայն Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի, տիրող դասակարգերի դիրքերը, այլ նաև բյուզանդական և արաբական հզոր պետությունների հիմքերը: Անշուշտ, այդ հզոր շարժումների արձագանքն էր նաև, որ Ներսես Շնորհալի կաթողիկոսին (1166–1173) ստիպում էր հատուկ կոչով («Թուղթ ընդհանրական») առանձին-առանձին դիմել սոցիալական բոլոր խավերին՝ սկսած իշխաններից մինչև քահանան ու չինականը, կոչ անելով պահպանել օրենքը, իրավունքը, անօրինականություն, կամայականություն թույլ չտալ, յուրաքանչյուրին դատել օրենքով և ըստ իր կարողության[9]: «Շնորհալին դեմ է նաև ֆեոդալական սանձարձակությանը: Դիմելով իշխաններին՝ նա ասում է, թե «անհնազանդների հետ անիրավացի միք վարվի ծանր ու դժվարակիր հարկադրությամբ, որ նրանք չեն կարող տանել, այլ դատեցեք օրենքով, յուրաքանչյուրին ըստ իր կարողության»: Եթե նկատի ունենանք այն փաստը, որ խաչակիրների օգնությամբ ուժեղացող Կիլիկիան հետզհետե ընդգրկվում էր առևտրական կապիտալի ոլորտի մեջ, այդ դեպքում հասկանալի կդառնա Շնորհալու ելույթը ֆեոդալական բացարձակ անօրինականությունների և սանձարձակ կամայականությունների դեմ. դա զարգացած ֆեոդալական տնտեսության գոյության ու նորմալ կերպով աճելու պահանջն էր: Հասկանալով այդ՝ Շնորհալին դիմում է ավատատերերին, ասելով՝ «Մի զոք անիրաւութեամբ դատիք, այլ ուղիղ դատաստան արարեք», «դատաստան ըստ օրինաց», ենթակաների նկատմամբ կիրառեք «զարքունական սահմանեայ իրաւունսն» և այլն: Օրենք և օրինականություն. ահա Ներսես Շնորհալու պահանջը: Եվ դա դրական առաջադիմական երևույթ էր»[10]:

Օրենքի գերիշխանության, օրինականության հաստատման միտումը որոշակիորեն նկատվում է Մխիթար Գոշի դատաստանագրքում (1184թ.) և Սմբատ Ապարապետի դատաստանագրքերում (1265թ.): Արդեն դատաստանագրքի նախադրության մեջ, որպես նրա ստեղծման շարժառիթի հիմքե-

---

հիշատակում էր նաև «իրավունքը չպաշտպանելու» հանգամանքը. տե՛ս Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1961, էջ 354:

9 Ներսես Շնորհալի. Թուղթ ընդհանրական. Երևան, 1991, էջ 103 և հտ.:

10 Հ. Գարրիելյան. Հայ փիլիսոփայական մտքի պատմություն. հ II, Երևան, 1958, էջ 97:

րից մեկի, Գոշը նշում է, որ աշխարհիկ և հոգևոր տերերից ոմանք փորձում են տարբեր միջոցներով (կաշառքով և տգիտությամբ) շեղել դատաստանը, արդարադատությունը, ուստի դատաստանագիրքը պետք է խոչընդոտի դրան, ճշմարիտ ուղի հանդիսանա. «... տեսանեմք զի այժմ ոմանք յեպիսկոպոսաց եւ վարդապետաց եւ ի քահանայից եւ ի գլխաւոր աշխարհականաց եւ յիշխանանց դի /զ/ աչառանօք եւ կաշառօք եւ տգիտութեամբ թիւրեն զուղիղ դատաստանն/թ/, Վասն որոյ սակաւուք դրոշմել կամեցաք զդիրս դատաստանի. զի լիցի ի յանդիմանութիւն այնպիսեացն եւ յուղղութիւն»[11]: Օրենքի, իրավունքի գերիշխանության գաղափարը մեր կարծիքով արտահայտվում է Գոշի դատաստանագրքի հետևյալ հոդվածներում: Ամենից առաջ թագավորական իշխանության աստվածայնության և անձեռնմխելիության ավանդական սկզբունքը խախտող Գոշի դատաստանագրքի 114-րդ հոդվածում, որը թույլատրում է «ընդհանուր համաձայնությամբ պատժել թագավորին, եթե դա անհրաժեշտ է խաղաղությունը պահպանելու համար»[12]: Թագավորական՝ պետական իշխանությունը գրվում է որոշակի չափի, կարգ ու կանոնի մեջ: Սմբատ Սպարապետը ևս հատուկ հոդված (70) է նախատեսել, որում ասվում է. «Թագավորները, որոնք այնքան հիմար կլինեն, որ երկիրը նրանց չկարողանա հանդուրժել, կարող են նույնիսկ վտարվել երկրից եկեղեցու և երկրի ամբողջ բնակչության համաձայնությամբ»[13]: Հայտնի է, որ հարյուրամյակներ հետո՝ 1776 թ. հուլիսի 4-ին իրենց «Անկախության հռչակագրում», որի հեղինակը ԱՄՆ-ի ապագա պրեզիդենտ Թոմաս Ջեֆֆերսոնն էր, ամերիկացիներն իրենց ժողովրդին իրավունք վերապահեցին ոչ միայն փոխել, այլև, նույնիսկ, ոչնչացնել այն իշխանությունը՝ կառավարությունը, որը չի կարողանա ապահովել մարդու, ժողովրդի բնական իրավունքները (կյանքը, երջանկությունը, անվտանգությունը, ազատությունը)[14]: Սա նաև ժողովրդաիշխանության սկզբունքի հաղթանակն էր՝ ժողովուրդների հազարամյակների պայքարից հետո: Ժողովրդաիշխանությունը իր իրավական ուժով բարձր է ամեն մի սահմանադրությունից, իսկ վերջինս ոչ թե սոսկ «զիջում» կամ «պարգև» է ժողովրդին, այլ նաև տիրապետող դասերին ժողովրդից սլատնեչող ու պաշտպանող միջոց: Այս իմաստով ևս Գոշի ու Սմբատի դատաստանագրքերի նշված իրավանորմերը առաջադիմական՝ նաև օրենքի իշխանությունը հաստատող նշանակություն ունեն:

---

11 Մխիթարայ Գոշի դատաստանագիրք հայոց, իրավարանական հետազոտութիւնք հանդերձ ծանոթութեամբք Վահան Վարդապետ Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 12, տե՛ս նաև Հ. Գաբրիելյան. նշվ. աշխ., էջ 101:

12 Մխիթար Գոշ. Դատաստանագիրք, էջ 422:

13 Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի) XIII դարի ձեռագրերի համեմատությամբ լույս ընծայեց Արսեն Վարդապետ Ղլաճեան, Էջմիածին, 1918, էջ 46, տե՛ս նաև Судебник Смбата Спарапета , Ереван, 1977, с. 106.

14 Տե՛ս Американские просветители , т 2 , М, 1969, с. 27

Գոշի դատաստանագրքի մի շարք կոնկրետ իրավանորմերում ևս պահանջվում է պահպանել օրենքը (հոդվ.1, 14, 83, 113, 120, 121): Մասնավորապես, Գոշը պահանջում է վարձատուից, տիրոջից վարձակալին (չինականին, գյուղացուն) սահմանվածից ավելի չաշխատեցնել, ժամանակին վարձը տալ, օրենքով սահմանվածից ավել աշխատացնելու, աշխատանքին հարկադրելու, դեպքում՝ չինականի հաշմության կամ նրա մահվան դեպքում հատուցել վնասները. նույնիսկ սպանության է հավասարեցնում սահմանվածից ավել աշխատանքի դեպքում վարձակալի մահվան փաստը[15]: Գոշի դատաստանագրքում կան մարդասիրական բնույթի առաջադիմական օրենքներ: Նա պահանջում է, որ ստրուկի կամ ճորտի կյանքի դեմ ոտնձգողը քրեական պատասխանատվության ենթարկվի՝ անկախ նրանից, թե ով է հանդգնողը և սոցիալական ինչ գիրք է գրավում: Մխիթար Գոշը շատ առաջ է անցնում իր դարից: Իրավունքի պատմության մեջ դատաստանագիրքը առաջիններից էր, որ սահմանում է ժամանակակից արտահայտությամբ աշխատանքի պաշտպանության կամ աշխատանքի անվտանգության վերաբերյալ օրենքներ: Օրինակ, Մխիթար Գոշը սահմանում է. «Եւ եթէ ավելի քան զօրենն անգթաբար հրամայիցէ գործել եւ այնու վնաս մահու հասցէ ի տերաց ընդ հարկիւ անկելոց, պարտապան լիցի արեան դատաստանի գերագոյն տերաց»[16]: Անրադառնալով Գոշի իրավաքաղաքական հայացքներին, պրոֆ. Հենրի Գաբրիելյանը իրավացիորեն առանձնացնելով նրա գլխավոր գիծը, նշում է. «Գոշը օրենքի և օրինականության կողմնակից է: Օրենքն ու օրինականությունը ավատատիրական ինքնիշխանության ոգուն հակառակ բան էր, գա տիրող վերնախավերի կամայականությունների սանձահարում էր: Գոշի հիմնական ծառայությունը հենց այն էր, որ նա գիտակցեց այդ և վճռականապես դուրս եկավ հիշյալ ֆեոդալական անօրինականության դեմ, դրանով ազդարարելով նոր իրավագիտակցության սաղմնավորման մասին»[17]:

Իրավական պետության, հասարակության գաղափարը մի նոր ուժով է երևան գալիս և առավել հստակությամբ դրսևորվում XVIII դարի հայտնի քաղաքական գործիչների՝ Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի և հատկապես Շահամիր Շահամիրյանի հայացքներում:

Հովսեփ Էմինը, որը կրթություն էր ստացել Անգլիայում, իրազեկ էր XVIII դարի լուսավորիչների հայացքներին, իր հուշերում արտահայտել է մի շարք գաղափարներ, որոնցում նկատելի է օրենքի, օրինականության նկատմամբ նրա դիրքորոշումը: Թե՛ Էմինը, թե՛ Մովսես Բաղրամյանը և թե՛ Շահամիր Շահամիրյանը միասնական կերպով արտահայտվում են բացարձակ միապետական, առավել ևս բռնակալական կարգերի դեմ և շեշտը

15 Տե՛ս Մ խ ի թ ա ր Գ ո շ. Դատաստանագիրք, էջ 330:

16 Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ. 3, Երևան, 1976, էջ 820:

17 Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 100-101:

դնում այնպիսի հասարակության կամ ապագա հայկական պետության այնպիսի մոդելի վրա, որը կղեկավարվի օրենքներով և ոչ թե կամայականությամբ: Իր հուշերի հենց սկզբում Էմինը նշում է, որ ինքը Անգլիա էր մեկնել նպատակ ունենալով ամենից առաջ ծանոթանալ, տեսնել իմաստուն օրենքների և օգտակար կանոնների եվրոպական գերազանց համակարգը[18]: Հետագայում ևս նա շարունակում էր պաշտպանել իր կարծիքն այս «հոչակավոր հանրապետական ազգի մասին , որի գերընտիր օրենքները ոչ թե մեկ ճրագի են նմանվում, որ միայն տիրոջ բնակարանն է լուսավորում, այլ նման են արևին, որն իր լույսը սփռում է ամբողջ երկնքի վրա»[19]: Էմինը ուղղակիորեն առաջադրում է օրենքներով ղեկավարվելու պահանջը. «Աստված բոլորին հավասար է ստեղծել, որպեսզի պատշաճ օրենքներով կառավարվեն (ընդգծումն իմն է – Մ.Թ.): Նույն արդարությամբ թե՛ հարուստը և թե՛ աղքատը, ցույց տալով, որ ամեն մարդ արժանապատվության զգացում ունի, առանց որի չի կարող տարբերվել անասունից»[20]:

Հերակլ II-ին գրված նամակում Էմինը, պատշաճ գնահատելով օրենքի, իրավունքի դերը հասարակության բարեկեցության ապահովման գործում, այն նույնիսկ հասցնում է չափազանցման. «Շատ մեծ են նրանց քաղաքները և երջանիկ են նրանց ժողովուրդները, որովհետև ոչ սովից, ոչ էլ վտանգներից չեն վախենում: Նրանք ունեն ընտիր օրենքներ, որոնց շնորհիվ ոչ մեկը, լինի թույլ կամ աղքատ, անօրինականության (անիրավության) զոհ չեն դառնում»[21]:

Մովսես Բաղրամյանն իր «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» պատմաքաղաքական երկում անդրադառնալով հայկական պետության անկման պատճառներին, նրանցից մեկը համարում է օրինազանցությունը, անհնազանդությունը, օրենքին ու իշխանությանը չենթարկվելը՝ ընդգծելով, որ օրինազանցությունը, կամայականությունը, անհնազանդությունը վնաս են հասցնում ոչ միայն ամբողջ հասարակությանը, այլ նաև հենց իրենց՝ իշխաններին, իշխանությանը[22]: Ուստի օրենքը պարտավոր են պահպանել բոլորը, գա է չարիքներից խուսափելու հիմնական երաշխիքներից մեկը: «Արդ, ինչպես խրտնած, պետք է, ուրեմն, խորշենք ու խույս տանք անհնազանդությունից, կամակորությունից, օրինազանցությունից ու անիրավությունից, ինչպես և տեսակ-տեսակ հանցանքներից, որոնցից մեզ միևնույն օրենքը հրամայում է մշտապես հրաժարվել և հեզությամբ ու

---

18 The Life ahd Adventures of Joseph Emin, an Armenian. London 1972, Calcutta, 1918, p. 2, *հմմտ., Յովսեփ Էմինի կեանքն ու արկածները, Պէյրութ, 1958:*

19 *Նույն տեղում, էջ 17, հմմտ. Յովսեփ Էմին..., էջ 23:*

20 *Նույն տեղում, էջ 142, հմմտ. Յովսեփ Էմին..., էջ 157:*

21 *Նույն տեղում, էջ 111, Յովսեփ Էմին... , էջ 128:*

22 *Տե՛ս Նոր տետրակ որ կոչի Յորդորակ. Երևան,1991,էջ 136, հմմտ Նոր տետրակ որ կոչի Յորդորակ. Մադրաս,1772, էջ167:*

խոնարհությամբ անհապաղ դիմել արդարությանն ու հնազանդությանը...»[23]: Բաղրամյանի կողմից թվարկվող հայ պետականության անկման հաջորդ հիմնական պատճառը ևս կապված է օրենքի հետ: Ըստ Բաղրամյանի, առաջին պատճառը դա ոչնչով, օրենքով չսահմանված ինքնիշխան իշխանությունն է, երբ թագավորները, իշխանները գործել են ինքնագլուխ ու առանձնաբար, առանց մեկը մյուսի հետ խորհրդակցելու, այլ կերպ՝ ոչնչով չսահմանափակված միապետական իշխանությունը[24]: Դրան հակառակ, Բաղրամյանը առաջարկում է միապետական իշխանությունը սահմանափակել խորհրդարան-պառլամենտով (կամ խորհրդակցական օրգանով), սահմանագրությամբ և անեղծանելի օրենքներով: Դա հասարակությանը բազմատեսակ վնասներից փրկելու երաշխիք է, քանզի մարդը միայնակ սխալական է. ըստ որում, հասարակության վրա ավելի ծանր է նստում իշխանի, թագավորի սխալը, քանզի նրանց իրավունքներն անհամեմատ ավելի մեծ են: «Ուրեմն, նշում է Բաղրամյանը,– թեև ամենք էլ մեղանչում և սխալվում են ոչ առանց վնասի և հատուցման, սակայն ոչ այնպես, ինչպես տերերը, իշխաններն ու ազգի նահապետները. բանն այն է, որ եթե հասարակ ժողովրդից որևէ մեկը սխալվում կամ մեղանչում է, ապա միայն իրեն է վնաս բերում, իսկ իշխանի սխալվելը ոչ միայն վնասներ, այլև երբեմն մեծամեծ պատուհասներ ու աշխարհավերություններ է բերում ամբողջ ազգին...»[25]: Հետևաբար պետք է իշխանությունը, պետությունը՝ ի դեմս թագավորի, իշխանի, ինքը ևս տեղավորվի օրենքի շրջանակներում, ենթարկվի օրենքին. «Ուստի իշխանությունը ինչ-որ միմիայն մեկի դատողությանն ու կառավարմանը չպետք է ենթակա լինի, այլ ամենալավագույնը կլիներ, եթե իշխանությունն անխախտելի սահմանադրությամբ և անեղծանելի օրենքներով կախում ունենար ընտիր-ընտիր ու մեծամեծ խորհրդականներից և տեսակ-տեսակ խորհրդարաններից: Այդ դեպքում միայն իշխանը կարող էր ժողովրդի հանդեպ ամեն մի խղճմտանքից ազատ լինել և երջանկորեն վայելել իր երկիրը, որի շնորհիվ և երկիրը կլիներ խաղաղ ու բարեկարգ վիճակում: Բանն այն է, որ թերևս ընտրյալներից մեկնումեկը սխալվի կամ ինչ-որ հանցավոր գործով տապալվի (նման պարագայում) մյուսները կարող են նրան փութանակի ուղղել ու ոտքի կանգնեցնել»*[26] (ընդգծումները մերն են – Մ.Թ.): Ավելորդ չէ հիշատակել, որ միապետական իշխանությունը սահմանափակելու գաղափարը հայ հասարակական-քաղաքական մտքին հայտնի է եղել ավելի վաղ ժամանակներից: Այսպես, օրնակ, Գրիգոր Տաթևացին (1346–1410) պաշտպանելով հանդերձ կառավարման միապետական ձևը, միաժամանակ անհրաժեշտ է համարում նրա կողքին խորհրդակցական մարմնի գոյությունը, ստեղծումը: Այս առնչու-

---

23 Նույն տեղում, էջ 137:

24 Նույն տեղում, էջ 129–133:

25 Նույն տեղում, էջ 130-131:

26 Նույն տեղում, էջ 132, հմմտ, Ցորդորակ..., էջ 161:

թյամբ անդրադառնալով Տաթևացու քաղաքական-իրավական հայացքներին Ն. Թովմասյանը գրում է. «Նա (Տաթևացին – Մ.Թ.) հայ ժողովրդի դժբախտություններից մեկն էլ համարում է ֆեոդալ իշխանների ինքնագլուխ գործունեությունն ու անմիաբանությունը»: «Եւ մերս առաջնորդք և իշխանք հոգևոր կամ մարմնաւոր՝ որք ինքնիշխանութեամբ կատարեն զգործն առանց խորհրդակցի, վասն որոյ բարձեալք իշխանութիւնք և ավերեալ երկիրն. և տարագրեալ են ժողովուրդք մեր ի վերայ երկրի և ցրուեալ յամենայն ազգս»: Տաթևացին այն համոզմանն է, որ հայ ազգը վերոհիշյալ աղետները կկարողանար կանխել, եթե երկրի պետական ու քաղաքական բոլոր հարցերը լուծվեն համազգային խորհրդի կողմից. «Եւ առաւել քան զամենայն պիտանաւորութիւն՝ ունին առ միմեանս զժողովիլն ի խորհուրդ. և ապա համաձայն նոցին խորհրդով՝ վարել զշինութիւն աշխարհի»: Այս խորհրդակցական մարմնի նշանակությունը Տաթևացին այնքան է չափազանցնում, որ փորձում է հավատացնել, թե այնտեղ իշխաններն էլ լսում են ժողովրդին և շարժվում են նրա ներկայացուցիչների խորհրդով: Երկրի կառավարման գործում խորհրդակցական մարմնի կարևորության վերաբերյալ Տաթևացու այս դրույթները ամենևին էլ չեն ժխտում միապետության անհրաժեշտությունը: Դրանք վկայում են միայն, որ Տաթևացին բացարձակ միապետությանը հակադրում է սահմանադրական (սահմանափակ – Մ.Թ.) միապետությունը, որը և նա համարում է կառավարման ամենառացիոնալ ձևը[27]: Բացի այդ. «Զարգացնելով Գոչի մտքերը, Տաթևացին գտնում է, որ երկրի կառավարման դործը լավ հիմունքների վրա դնելու համար, անհրաժեշտ է լավ օրենքներ ունենալ ու ղեկավարվել դրանցով: Նա այն կարծիքին է, որ օրենքները ստեղծված են մարդկանց համար և ոչ թե ընդհակառակը: Այդ պատճառով էլ, երբ դրանք հնանում են, պետք է փոխարինվեն նորերով: Առհասարակ, օրենքները գոյություն ունեն ժամանակի ընթացքում, ժամանակն իշխում է օրենքների վրա, որովհետև ժամանակը կարող է օրենքները փոփոխության ենթարկել, գրում է Տաթևացին: Նա նշում է, որ երբեք չի կարելի անտեսել ժամանակի պահանջը, չզբաղվել օրենքների համեմատությամբ ու դրանց հարմարեցումով ժամանակի ոգու հետ, որովհետև նրանք, բխելով մեր կամքից՝ ընդունվում են բանականության կողմից և միայն իմաստությամբ ու կամքով են գործադրվում: Այսպիսով, Տաթևացին խիստ օրինականության կողմնակից է և այդ նպատակին հասնելու համար առաջարկում է գործող օրենքները չբացարձակացնել, այլ շարունակ վերանայել, վերափոխել, այդպիսիք հարմարեցնել ժամանակի պահանջների հետ: Բայց նա գտնում է, որ փոփոխման կարող են ենթարկվել միայն քաղաքացիական օրենքները, իսկ ինչ վերաբերում է

---

27 Ն. Թ ո վ մ ա ս յ ա ն. Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները. Երևան, 1966, էջ 70–71: Տե՛ս նաև Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 213-214:

կրոնական օրենքներին, ապա դրանք հավիտենական են ու երբեք չեն կարող փոխարինվել նոր օրենքներով »[28]:

Իրավական պետության, իրավունքի գերիշխանության գաղափարը առավել որոշակի ու գրա ժամանակակից ըմբռնմանը համահունչ է արտացոլվել Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» գրքում: Օրենքների այդ ժողովածուի անունն իսկ արտահայտում է հեղինակի հստակ նպատակը՝ ստեղծել օրենքներ, որոնք «որոգայթ», թակարդ պետք է դառնան բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն ի չարը գործադրել իշխանությունը, վնասել մարդուն, հասարակությանը: Եվ ընդհանրապես, մարդու բնությունը փոփոխական է, ուստի սխալներից խուսափելու համար պետք է «... ընտրել մեզ վարք, և կարգ, և օրենք վասն վարուց կենաց մերոց և լծորդել փոփոխական բնութիւնս մեր ընդ անշարժ օրինաց, զի եթէ ժամանակ ընդ ժամանակս կենաց մերոց ըստ խառնուածոց բնութեան մերոյ միտս մեր ձգտիցէ առ ի գործս անասնոց և անբանից: Շղթայք կապանաց օրինաց մերոց պնդելով՝ սաստեցուսցէ բնութեանս մերոյ և օրինաց դատապարտեսցի, զի կացցուք և մնասցուք ամենեքեանս բարեպէս ընդ կարգ և սահմանս մերոյ օրինաց, որ ընտրեցեալ ի լրումն ժամանակէ, բնութեանց մերմէ, զի սովաւ արդարասցի դատաւորն և սովաւ ընդունեսցի մեղաւորն պատիժս իւր վասն մեղաց գործոյ ձեռաց իրոյ, և սովաւ յայտնեսցի բարին և չարն, սովաւ ծանիցէ ամենայն բնութիւն մարդոյ հարկս իւր և համախոհ հնազանդելով օրինաց իրեանց՝ ընթանասցէ ուղղակի կառն, իրաւանց և արդարութեանց, և կառաւարիչն կալով մնասցէ առանց տեղի բամբասանաց» և այլն[29]: *Հերակլ II-ին, 1787թ. հոկտեմբերի 15-ին գրած նամակում, Շահամիրյանը, ուղղակի խորհուրդ է տալիս, որ թե՛ հասարակ ժողովրդի և թե՛ հենց իր համար վրաց թագավորը,* որպես միակ տեր ու առաջնորդ, ընդունի օրենքը, ղեկավարվի նույն օրենքով. «*Արա քեզ օրէնս և կարգադրեա վասն ամենայն ծննդոց հովանաւորութեան քոյ թեթևութիւն բեռաց և քաղցրութիւն լծոյ և ջախջախեա լուծն ծառայական, զի մի երևսցի ի վերայ պարանոցի ժողովրդեան քոյ* և արա նոցա ծառայ միայն օրինաց իւրեանց *և ազատես նոցա ի ծառայութենէ որոք բնութեան մարդոյ. յատկապէս ինքնակալ տեառնէ և ինքնակամ հրամայողէ: Տարածեա մարդասիրական միտք քոյ առ ի անկարութիւն իբրև անմեղ գառանց քեզ յուսացելոց հասարակ ժողովրդոց: Մինչ դեռ ժամանակն ի ձեռս քոյ է,* փակեա լծորդեա, կալանաւորեա ըստ անխախտելի օրինաց ամենայն ինքնակամ շարժմունս և ներգործութիւնս քոյ, *և ի քէն ապաղալացողի տեառն, և արձանագրեա անխախտելեաք յօրէնս վասն կառավարելոյ գահն և աշխարհն և ժողովուրդն*

---

28 *Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն. Նշվ. աշխ. էջ 215: Տե՛ս նաև Ս. Ա. Զ ա ք ա ր յ ա ն. Գրիգոր Տաթևացու ուսմունքը իշխանության և կառավարման մասին. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, N2, էջ 3-14:*

29 *Գիրք անուանեալ Որոգայթ Փառաց, վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան. Մագրաս, 1773, Թիֆլիս, 1913, էջ 32-33:*

տէրութեան քոյ, միևնոյն օրինոք, որում զու և իշխանք և գավառապետք աշխարհի քոյ և հասարակ ժողովուրդք այսօր հաւանիք, և հաճեսցի կամաց ամենեցուն և հրամայեա ընթանալ ի գործ , զի սովաւ կացցէ և մնասցէ իրրև անմահ Աստուծապահ անձն քոյ, մաքրազարդ սերնդօք փառօք և պատուօք այժմ և միշտ յաւիտեան»[30] (ընդգծումները մերն են – Մ.Թ.):

Հայտնի է, որ «Որոգայթ փառաց»-ը բաղկացած է տեսական՝ ներածական մասից կամ առաջին հատորից, որում շարադրված են Շահամիրյանի հասարակական- քաղաքական հայացքները, և երկրորդ հատորից՝ բաղկացած 521 հոդվածից, որը և կազմում է նրա օրենսդրական մասը: Այդ երկու մասերը անջրպետված չեն, այլ միմյանց օրգանական շարունակությունն են կազմում: Առաջին հատորում առաջ քաշելով ինքնակալական - միապետական կարգերի վերացման, բուրժուական սահմանագրական կարգերի (պառլամենտական կամ նախագահական հանրապետության) ստեղծման, օրենքի գերիշխանության հաստատման գաղափարը, երկրորդ հատորում Շահամիրյանը այդ գաղափարները օրենսգրականորեն ամրագրում է կոնկրետ հոդվածներում՝ սահմանելով պետական կոնկրետ ձևերի, պետական կառուցվածքի, պետական մարմինների փոխհարաբերության կոնկրետ վիճակները[31]: Ելնելով օրենքի գերիշխանության, իրավական պետության, «իշխանությունների բաժանման» սկզբունքից, Շահամիրյանը խստորեն սահմանազատել է օրենսդիր, գործադիր և դատական ֆունկցիաները: Օրենքների ընդունումը օրենսդիր միակ և երկրի բարձրագույն օրգանի՝ Հայոց տան բացառիկ իրավասությունն է: «Որոգայթի» 16-րդ (ԺԶ) հոդվածը ազդարարում է, որ օրենքը ընդունվում է Հայոց տան կողմից հայոց ամբողջ ազգի կամքին ու ցանկությանը համապատասխան և միաժամանակ ընդգծում է որ ազգն օրենքն ընդունում է որպես իր միակ առաջնորդի[32]: Ըստ իշխանությունների բաժանման սկզբունքի կառավարությունը՝ նախարարը կամ 12 հոգուց կազմված՝ կարինետի անդամները ընտրվի են և ենթարկվում են Հայոց տանը և օրենքին[33]: Կառավարությանը լիազորությունների մանդատ է տալիս Հայոց տունը՝ 3 տարով, կառավարությունը ընտրվի է և ոչ թե նշանակվի:

Ուշագրավ է, որ ոչ միայն 13 հոգուց բաղկացած կառավարությունը, այլև բոլոր նախարարները և զինված ուժերի հրամանատարներ սպարապետները, ինչպես նաև դատավորներն ընտրվի են: Ըստ որում Շահամիրյանը նախատեսել էր ֆինանսների՝ գանձապետության, առողջապահության՝ պետ տկարաց և աղքատաց, զինված ուժերի և այլ դերատեսչու-

---

30 Պ. Ա. Զ ո ր ա ն յ ա ն. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. Երևան, 1981, էջ 170:

31 Մանրամասն տե՛ս Մ. Մ. Թ ե լ ո ւ ն ց. Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը. Երևան , 1995 , էջ 132 և հտ.:

32 Որոգայթ փառաց, էջ 151 (ընդգծումը մերն է – Մ.Թ.):

33 Նույն տեղում, էջ 173–182:

թյուններ, նախարարություններ: Ընտրվի էին նաև 60 դատավորները, որոնցից յուրաքանչյուրը պետք է նստեր քաղաքում, ինչպես նաև գերագույն դատարանը: Ընտրության առաջին աստիճանը՝ անմիջապես ժողովրդի կողմից պատգամավորի՝ փոխանորդի ընտրելն էր, երկրորդ աստիճանը՝ ընտրությունը վիճակահանության ձևով: Շահամիրյանի «Որոդայթը» նշանակովի պաշտոն չունի և սա պետության իրավականության ծանրակշիռ երաշխիքներից է: Ըստ «Որոդայթի» անմիջապես ժողովրդի կողմից ընտրված 568 պատգամավորների՝ փոխանորդների կեսը ընդգրկվում է գործադիր իշխանության, մյուս կեսը՝ 284 անձ, օրենսդիր գործունեության մեջ: Ըստ որում, գործադիր իշխանությունն իրականացնող բոլոր պաշտոնյաները իրենց լիազորությունների մանդատը ստանում են ժողովրդից՝ համայնքից՝ ընտրողներից և Հայոց տնից՝ պառլամենտից (խորհրդարանից) :

ИДЕЯ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА В АРМЯНСКИХ ИСТОРИКО -ПРАВОВЫХ ПАМЯТНИКАХ

М.М.Телунц

Резюме

В статье на основе анализа армянских историко-правовых памятников делается вывод о том, что принцип правового государства, который законодательно закреплен во многих современных конституциях и основные элементы которого встречаются еще у античных мыслителей–Платон (428/27–347 гг. до н. э.), Аристотель (334–322 гг. до н. э.) и др.–, с определенной ясностью отражен и в армянских историко–правовых памятниках, в том числе у армянских историографов Фавстоса Бюзанда (V век), в Судебнике Мхитара Гоша (1184 г.) и др. Идея правового государства более конкретно и четко отражена у армянских мыслителей, деятелей освободительного движения второй половины XVIII в.: Иосифа Эмина, Мовсеса Баграмяна, Шаамира Шаамиряна, особенно в первой армянской Конституции –"Западня честолюбия" – своде законов, который полностью был основан на идее "правового государства".